ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՄՏՀ-19/1.1

ք. Երևան «01» 08 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **150000 (Մեկ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[4]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[5]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011027191 ՀՎՀՀ 02631263 /ստորագրություն/ Կ.Տ	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ Ք. Երևան, Կոմիտաս 54բ «Արդշինբանկ» ՓԲԸ, Նաիրիի մ/ճ Հ/Հ 2473700277210010 ՀՎՀՀ 01508665 էլ հասցե.ekpertizaproektov@mail.ru Հեռ. 093 80 00 09 /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 01 » « 08 » 2019 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՄՏՀ-19/1.1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	71351540/2	Տեխնիկական հսկողության ծառայություններ	դրամ	150000	1	ք.Երևան,Ա.Ս արգսյան փ.թիվ 22	20.12.2019թ

Տեխնիկական բնութագիր

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:
2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:
3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են՝
   - շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,
   - ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը վերանորոգման նորմերին և կանոններին
   - Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,
   - ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,
   - վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,
   - ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,
   - ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար,
   - կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք

կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում,

- գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,
- հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,
- կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),
- կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
- շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները:
- Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ,ք. Երևան,Մալաթիա-Սեբաստիա համայնքի քննչական բաժնի վերանորոգում

N/N	Հիմնավորում	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ
1	2	3	4	5
		1. Քանդման և մաքրման աշխատանքներ		
1	23-143	Միջնորմների քանդում	Խոր.մ.	22.72
2	23-166	Խեցեգործական սալիկներից հատակների քանդում	100 քառ. մ	0.87
4	23-171	Լինոլեումե /ՊՎՔ/ հատակների քանդում /շրիշակների հետ միասին/	100 քառ.մ	1.32
5	ռ 11-227 կիրառելի	Պատերի և սյուների վրայից գաջե սվաղի քանդում	քառ.մ	298.0
6	ռ11-229	Առաստաղների վրայից գաջե սվաղի քանդում	քառ.մ	255.0
7	11-98 գ--0,5	Պատերի և շեպերի ցեմ. ավազե սվաղի քանդում	քառ.մ	68.90
10	23-103	Պատերում անցքերի բացում քանդումով	խոր.մ	5.60
12	23-143	Կանոնավոր քարե շարվածքի պատերի քանդում	խոր.մ	4.50

11	25-17 գ--0,6	Մետաղական ճաղավանդակի ապամոնտաժում	տ	0.170
12	23-172	Պատուհանների ապամոնտաժում /ներառյալ շրջանակը/ վերադարձ	քառ.մ	19.0
13	7-47-վ	Պատուհանագոգերի ապամոնտաժում /57 քառ.մ/	հատ	1.00
14	23-174	Փայտյա դռների ապամոնտաժում	քառ.մ	4.100
15	1--95	Աշխատանք աղբակույտի վրա	1000 խոր.մ	0.115
16	23-228	Շին աղբի բարձում ձեռքով ավտոինքնաթափի վրա	տ	153.0
17	310-12	Տեղափոխում մինչև 5կմ	տ	153.0
		2. Պատերի շարվածք		
278	6--36	Միջնորմների շարվածք պեմզաբլոկներով 10 սմ հաստ.	100 քառ.մ	1.65
279	Շուկա	A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.162
280	Շուկա	Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.068
281	6--41	Անցքերի լցափակում թեթև բետոնով B - 7.5 դասի	խոր.մ	0.70
282	26-31	Ներդիր էլեմենտների տեղադրում 3*100*300	տ	0.22
283	6--41	Անցքերի լցափակում միջնորմներում փրփրապլաստով 20մմ	խոր.մ	0.410
284	Շուկա	Դյուբել	հատ	642.0
285	3--36	Միջնորմների շարվածք պեմզաբլոկներով 20 սմ հաստ./ 53 քառ.մ/	խոր.մ	10.6
286	Շուկա	A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.060
287	Շուկա	Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.049
288	6--41	Անցքերի լցափակում թեթև բետոնով B - 7.5 դասի	խոր.մ	0.954
289	26-31	Ներդիր էլեմենտների տեղադրում 4*100*400	տ	0.066
290	6--41	Անցքերի լցափակում միջնորմներում փրփրապլաստով 20մմ	խոր.մ	0.169
291	Շուկա	Դյուբել	հատ	106.0
157	26-45	Ե/բ միջուկների իրականացում B-15 մակնիշի բետոնով	խոր.մ	4.000
158	Շուկա	Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.25
159	Շուկա	A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.13
257	8-59	Շարվածքի ամրանավորում ցանցով /94 քառ.մ/	տ	0.08
		3. Պատուհաններ և դռներ		
298	Շուկա	**Պ-1** Մետաղապլաստե շագանակագույն պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, բացվող , բարդ փականով /ներառյալ տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	24.05

299	Շուկա	**Պ-1** Մետաղապլաստե շագանակագույն պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, չբացվող /ներառյալ տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	35.79
310	Շուկա	**Պ-5** Պլաստմասից պատուհանագոգեր 40 սմ լայն. տեղադրումով և տեղափոխումով	գծ.մ.	20.13
278	Շուկա	Մետաղապլաստե շագանակագույն վիտրաժների տեղադրում ներկառուցված դռնով /տեղադրումը,տեղափոխումը /	քառ.մ	9.20
271	Շուկա	Մետաղապլաստե շագանակագույն դռներ սանհանգույցներում /ներառյալ տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	3.66
275	10-105	Փայտյա կարկասով խուլ ՄԴՖ-ով երեսապատած, դռների տեղադրում միջնորմներում /փականները,երեսակը սարքերը արգելափակիչը հետ միասին / 20 հատ	քառ.մ	11.72
		4.Ներքին հարդարման աշխատանքներ		
357	11-178	Պատերի բարելավված սվաղ գաջով	100 քառ.մ	3.48
359	11-179	Առաստաղի բարելավված սվաղ գաջով	100 քառ.մ	0.76
363	11-188	Շեպերի սվաղ գաջով	100 քառ.մ	0.34
371	34-389	'ARMSTRONG' տիպի հավաքովի առաստաղի տեղադրում	քառ.մ	78.20
317	5-115	Հատակի պատում կերամիկական սալիկներով	100 քառ.մ	0.65
		Հատակներ		
306	5-85	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 20մմ հաստութ.	100 քառ.մ	1.05
325	5-115	Հատակի ծածկույթի իրականացում լավորակ կերամագրանիտե սալիկներով	քառ.մ	35.1
326	11--252	Շրեշակների իրականացում լավորակ մամլագրանիտե սալիկներով հ-10սմ /9.4 քառ.մ/	100 գծ.մ	0.410
320	5-119	Լամինատե հատակի ծածկույթի իրականացում 10մմ հաստ. շրիշակների հետ միասին	քառ.մ	165.0
347	Շուկա	Շրիշակների իրականացում պլաստմասե պրոֆիլով	գծ.մ	201.200
		5. Արտաքին հարդարման աշխատանքներ		
381	11-107	Շեպերի սվաղ ցեմենտավազե շաղախով 20սմ հաստ /31.6 քառ.մ/	գծ.մ	110.8

391	14--233	Արտաքին պատերի և շեպերի ներկում 2 անգամից ճակատային ներկով	քառ.մ	285.0
382	11-157	Նոր շարվածքով պատերի սվաղ ցեմենտավազե շաղախով մետաղական ցանցի վրա	քառ.մ	63.0
25	25-17	Ճաղավանդակի պատրաստում քառակուսի պողպատե խողովակներից	տ	1.14
14	Շուկա	Պողպատե խողովակ □30x30x2մմ	գծ.մ.	670.0
20	33--82	Ճաղավանդակի ներկում 2 անգամ	տոննա	1.140
		5-1. Մուտքային հատված և աստիճաններ		
87	16-57	Ասֆալտոբետոնե շերտի քանդում 80 մմ հաստ.	100 խոր.մ	0.020
4	1--40	III կարգի բնահողի քանդում	խոր.մ	2.20
6	1--216	III կարգի բնահողի փորում ձեռքով	խոր.մ	0.60
17	1-201	III կարգի բնահողի հետլիցք ձեռքով	100 խոր.մ	0.004
14	26-1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-15 դասի բետոնից h-15 սմ	խոր.մ	0.30
157	26-45	Ե/բ միջուկների իրականացում B-20 մակնիշի բետոնով	խոր.մ	3.8
44	23-114	Գոյություն ունեցող աստիճաններում անցքերի բացում ø 200 մմ	հատ	45.0
434	9--37	Ե/բ հատավոր աստիճանների տեղադրում L= 0.5 մ /15 հատ/	գծ.մ	7.50
536	26-84	Միաձույլ ե/բ աստիճանների իրականացում B-15դասի բետոնից	խոր.մ	2.60
158	Շուկա	Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.82
159	Շուկա	A-500c դասի ամրանի արժեքը	տ	2.10
75	26-31	Ներդիր էլեմենտների տեղադրում պողպատաթերթից	տ	0.006
270	Շուկա	Աստիճանների տակ մետաղապլաստե դռների /տեղադրումը ,տեղափոխումը ներառված է գնի մեջ/	քառ.մ	2.10
437	13-143	Արտաքին աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	քառ.մ	46.50
406	13-53 տեխ մաս կետ 1,5	Պատերի երեսապատման տուֆե սալիկներով, հաստ 30մմ	քառ.մ	14.60
419	Շուկա	Տուֆե մուտքային սյուներ ø 380	գծ.մ	4.80
419	Շուկա	Տուֆե մուտքային սյուների քիվեր ø 420	գծ.մ	1.40
419	Շուկա	Բազալտե բազրիքներ	հատ	15.0
419	Շուկա	Բազալտե բռնակ	գծ.մ	4.6

424	9-41	Մետաղական բռնակի տեղադրում	100 գծ.մ	0.178
5	16-65	Բազալտե խճից հիմնատակի իրականացում տոփանումով 1 շերտ	100 քառ.մ	0.002
125	16-49	Ենթաշերտի պատրաստում միջհատիկային ավազից 10 սմ հաստ.	խոր.մ	1.25
5	16-162	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ա/բետոնե խառնուրդից n= 80մմ	100 քառ.մ	0.022
9		**5-2. Մուտքային հատվածի տանիք**		
219	9-69	Մետաղական կարկասի մոնտաժում քառակուսի խողովակներից, , և թերթավոր պողպատից	տ	0.563
221	Շուկա	Պողպատե խողովակ □50x50x3մմ	տ	0.132
222	Շուկա	Պողպատե խողովակ □40x40x3մմ	տ	0.26
220	Շուկա	Պողպատե խողովակ □80x80x4մմ	տ	0.11
164	Շուկա	Պողպատե անկյունակ 50*50*3	տ	0.038
159	Շուկա	A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.006
223	Շուկա	Թիթեղ պողպատից 8 մմ հաստ.	տ	0.017
225	33--82	Մետաղական կոնստրուկցիաների ներկում 2 անգամ /18.5 քառ.մ/	տ	0.563
192	8-265	Տանիքի ծածկի իրականացում ալիքավոր ցինկապատ թիթեղից փայտե կավարամածի պատրաստումով	100 քառ.մ	0.493
194	8--191	Ջրահեռացման ցինկապատ 0,5մմ հաստ թիթեղից նոր խողովակների մոնտաժում ձևավոր մասերի հետ միասին	կ-տ	2.0
194	8--191	Ջրահեռացման ցինկապատ 0,5մմ հաստ թիթեղից նոր խողովակների մոնտաժում ձևավոր մասերի հետ միասին մնացած մասնաշենքերի համար	կ-տ	2.0
		1. Ջեռուցում		
1	Շուկա	Ջեռուցիչ տուրբո-կաթսա 31.0 կվտ հզոր.	լրակազմ	1.0
2	Շուկա	Ջրի պոմպ Q=72խոր.մ/ժաN=1,5Կվտ	լրակազմ	1.0
3		Զտիչ d=20	կ-տ	1.0
4	16--261	Ջրագազամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ /ամրացումով/d=16*2,2մմ փորձարկումով	գծ.մ	65.0
5	16--261	Ջրագազամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ /ամրացումով/d=20*3,4մմ փորձարկումով	գծ.մ	68.0

6	16-662	Ջրագազամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ /ամրացումով/d=25*4,2մմ փորձարկումով	գծ.մ	15.0
7	16--134	Փական d=15մմ	հատ	9.0
8	19-348	Փական d=20մմ	հատ	6.0
9	17-248	Ալյումինե ջեռուցման մարտկոցների մոնտաժում 139*0.28	էկմ	24.44
10		Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը H=500մմ 150 վտտ	սեկց	69.0
11	17-305	Օդահան փականներ d=15մմ /մանսկի/	հատ	19.0
12	19-348	Ջերմակարգավորիչ փական d=15մմ	հատ	19.0
14	19-348	Հետադարձ փական d=20մմ	հատ	1.0
15	Շուկա	Ձևավոր մասեր և ֆիտինգներ	հատ	55.0
16	Շուկա	Ջեռուցիչ սարքերի ամրացման համար կեռեր	հատ	22.0
17	19-419	Ցանցի փորձարկում	գծ.մ	231.0
18	19--1 կիրառ.	Մետաղապլաստ խողովակների ապամոնտաժում d=16*2.2 - 20*3.4 մմ	գծ.մ	60.0
19	17--140 կիրառ.	Ջեռուցման ալյումինե մարտկոցների ապամոնտաժում	սարք	2.0
		Ներքին ջրամատակարարման ցանց		
		1. Ներքին ջրամատակարարում		
1	16--262	Ջրամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ փորձարկումով d=20*2,3մմ	գծ.մ	3.0
2	16--262	Ջրամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ d=25*2,3մմ	գծ.մ	38.0
3	19-318	Պողպատե խողովակ d=25մմ	գծ.մ	4.0
4	19-353	Փական d=15մմ	հատ	6.0
5	19-353	Փական d=20մմ	հատ	3.0
8	11--155-1	Ջրաչափ d=20մմ	հատ	1.0
9	18--212	Ֆիլտր d=20մմ	հատ	1.0
10		Ձևավոր մասեր և ֆիտինգներ	հատ	24.0
11	19-353	Լվացարանի ծորակ	հատ	4.0
12	19-419	Ցանցի փորձարկում	գծ.մ	60.0
13	14-398	Մետաղական խողովակների ներկում հակաքայքայիչ ներկով 2 անգամ	100 քառ.մ	0.005
14	19--1	Պողպատե խողովակների ապամոնտաժում մինչև d=15-32 մմ	գծ.մ	20.0
		Ներքին կոյուղու ցանց		
		1. Ներքին կոյուղու ցանց		

1	16-34	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակներ , պատի վրա d=50մմ	գծ.մ	15.0
2	16-34	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակներ , պատի վրա d=100մմ	գծ.մ	33.0
3	19-408	Խեցե զուգարանակոնք	լրակազմ	5.0
4	17-22	Խեցե լվացարանակոնք	լրակազմ	4.0
5	19-419	Ցանցի փորձարկում	գծ.մ	70.0
6	Շուկա	Կոյուղու անցում պոլիվինիլքլորիդե 100/50	հատ	3.0
7	Շուկա	Ստուգիչ d=100մմ	հատ	1.0
8	Շուկա	Պոլիվինիլքլորիդե կոյուղու եռաբաշխիչ d=100մմ	հատ	8.0
9	Շուկա	Պոլիվինիլքլորիդե կոյուղու եռաբաշխիչ d=50մմ	հատ	1.0
10	Շուկա	Պոլիվինիլքլորիդե կոյուղու անկյունակ d=100մմ	հատ	2.0
11	Շուկա	Պոլիվինիլքլորիդե կոյուղու անկյունակ d=50մմ	հատ	3.0
14	19-67	Թուջե խողովակների ապամոնտաժում մինչև d=50-100մմ	գծ.մ	10.0
15	23-116	Անցքերի բացում պատերում D=300մմ	հատ	1.0
16	23-116	Անցքերի բացում միջնապատերում D=300մմ	հատ	3.0
		Էլեկտրալուսավորություն		
		1. Էլեկտրալուսավորություն		
1	8--612-10 գ-0,4	Լուսավորության վահանակների ապամոնտաժում	Կոմպլ.	1.0
3	8-599-1 գ-0,4	Առաստաղային լուսատուների ապամոնտաժում	հատ	2.0
12	Շուկա	Ջահ 7*23 վտ ԼԵԴ տիպի լամպերով	հատ	1.0
13	Շուկա	Ջահ 5*23 վտ ԼԵԴ տիպի լամպերով	հատ	1.0
14	Շուկա	Ջահ 3*23 վտ ԼԵԴ տիպի լամպերով	հատ	7.0
15	Շուկա	Առաստաղային լուսատու 24 վտ ԼԵԴ տիպի միջանցքի	հատ	10.0
16	Շուկա	Առաստաղային լուսատու 13 վտ ԼԵԴ տիպի սանհանգույցի	հատ	9.0
17	Շուկա	Առաստաղային լուսատու 23 վտ ԼԵԴ տիպի կաթսայատան	հատ	1.0
18	Շուկա	Առաստաղային լուսատու 23 վտ ԼԵԴ տիպի պահոցի	հատ	1.0
19	Շուկա	Բոա պատի աստիճանավանդակի 23 վտ ԼԵԴ տիպի պահոցի	հատ	3.0
20	8-591-5	Անջատիչ միաբևեռ	հատ	4.0
21	8-591-5	Անջատիչ երկբևեռ	հատ	3.0
22	8-591-7	Վարդակներ հողանցումով	հատ	44.0
23	8-591-7	Վարդակներ հողանցումով փակովի	հատ	1.0
24	Շուկա	Տեղադրման տուփ	հատ	70.0

26	Շուկա	Գոֆրա խողովակներ d-25մմ	գծ.մ	15.0
27	8--148-9	Մալուխի անցկացում պատերով և կոնստրուկցիաներով	100 գծ.մ	4.95
28	Շուկա	Մալուխ ՎՎԳ 5*10 քառ.մմ	գծ.մ	13.0
29	Շուկա	Մալուխ ՎՎԳ 3*4 քառ.մմ	գծ.մ	55.0
30	Շուկա	Մալուխ ՎՎԳ 3*2,5 քառ.մմ	գծ.մ	420.0
31	Շուկա	Ամրակներ	հատ	15.0
33	23-114	Վարդակների և անջատիչների փոսի փորում	հատ	52.0
35	23-124	Հաղորդալարերի փոսի փորում	գծ.մ	390.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011027191
ՀՎՀՀ 02631263

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտաս 54բ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նաիրիի մ/ճ
Հ/Հ 2473700277210010

ՀՎՀՀ 01508665
էլ հասցե.ekpertizaproektov@mail.ru
Հեռ. 093 80 00 09

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«01» «08» 2019 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՄՏՀ-19/1.1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/2	Տեխնիկական հսկողության ծառայություններ							75000	75000	150000	150000	150000	150000	150000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011027191
ՀՎՀՀ 02631263

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
Ք. Երևան, Կոմիտաս 54բ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նաիրիի մ/ճ
Հ/Հ 2473700277210010

ՀՎՀՀ 01508665
էլ հասցե.ekpertizaproektov@mail.ru
Հեռ. 093 80 00 09

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 01 » « 08 » 2019 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՄՏՀ-19/1.1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 01 » « 08 » 2019 թ. կնքված
ՀՀԲԿ-ԳՀԾՁԲ-ՄՏՀ-19/1.1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն